# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնք
Հասցե՝ գ. Ամասիա 26փողոց, 19շենք
հեռախոս /0246/ -223-10
էլ. Փոստ amasia.shirak@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«16» մարտի 2017 թվականի թիվ 9-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ /ԱՐԵԳՆԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐ/ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 6-ի թիվ 10 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքի ավագանին

**որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի գյուղական համայնքի (Արեգնադեմ բնակավայր) հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի նպատակային նշանակության **0.028** հեկտար գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 08-018-0125-0003-002/ փոխադրել էներգետիկայի, կապի,

տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն, այդ հողամասում առկա քլորակայանի գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի գյուղական համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանին՝

1) ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | կողմ (9) | դեմ (0) | ձեռնպահ(0) |
|---|---|---|---|
| 1. Ալեքսան Քոչոյան | | | |
| 2. Արտեմ Դավթյան | | | |
| 3. Մանվել Խոջումյան | | | |
| 4. Արա Հարությունյան | | | |
| 5. Սերոբ Ղուկասյան | | | |
| 6. Կարապետ Մելքոնյան | | | |
| 7. Արման Միրզոյան | | | |
| 8. Հայկ Նիկոլյան | | | |
| 9. Վարդան Պապիկյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«16» մարտի 2017 թվական
գյուղ Ամասիա